

Գալիֆորնիոյ Մելրոնեան Աանուց Միութեան վարչութեան կազմակերպած ճաշկերոյթը տեղի ունեցաւ. Կիրակի 13 Յունիս, 2004-ի երեկոյեան ժամը 5:00-էն սկսեալ, կլենտլիի Մէնտլուն ջրեղազարդ ճաշարանին մէջ: Պատուոյ հիլըն էր Հաստատութեան վաստակաւոր ուսուցիչ Սեպուհ Արգարեանը, որ այս առթիւ յատուկ ժամանած էր Հայաստանէն, ուր ան այժմ Հաստատուած է:

Կոչնականներուն մէջ ուշագրաւ էր երեւոյթ մը, որ մեծապէս տպաւորեց զիս արդարեւ անոնց մէջ ակներեւ էին եօթանասունը անց եւ երեսունը Հազի թեւակոխած ջրջանաւարտներ, որոնք բոլորն ալ եկած էին թիկունք կանգնելով վարչութեան որոշումին, պայքարելու ՀԲԸՄիութեան կեդրոնական Վարչութեան Մելրոնեան Հաստատութիւնը փակելու որոշումին դէմ: Ներկայ էր նաեւ Արժ Տէր Շնորհք Ա. Հնչ. Տէմիրճեան:

Բացման խօսքով Հանդէս եկաւ Ռաֆֆի Զինգալեան ան նախ Հրաւիրեց Պրն Ս Արգարեանը, որ ներկաները առաջնորդէ Հաստատութեան քայլերգը երգելու: Ապա Պրն. Զինգալեան դիտել տալէ ետք թէ ճաշկերոյթի ընթացքին տեղի պիտի ունենայ անձայն աճուրդ, որուն Հասոյթը պիտի յատկացուի դատական ծախսերուն, Հրաւիրեց վարչութեան ատենապետ կարօ Գասապեանը որ ընէ իր սրտի խօսքը:

Պրն. Գասապեան նախ հաղորդեց մելգոնեանցիներու մեծ ընտանիքին արգար ընդվզումը հանդէպ ՀԲԸ-Միութեան կեդրոնական Վարչութեան Մելգոնեան կրթական Հաստատութիւնը փակելու որոշումին: Ան կոչ քրաա. բոլորին՝ իրենց կարողութեանց համաձայն մասնակցելու դրամահաւաքի արշաւին, իրենց նպատակի յաջողութեան Համար: Վերջապէս, ան հրաւիրեց նախկին ատենապետ ժիրայր Սակարեանը, որ Աեպուհ Արգարեանի ձեռամբ. ստանայ գնահատանքի յատուկ յուշատախտակ մը:

Օրուայ գլխաւոր բանախօսն էր Աեպուհ Արգարեանը ան նախ հանգամանօրէն անդրադարձաւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան պատմութեան, անցնող ութ տասնամեակներու ընթացքին եւ նշեց որ ՀԲԸՄիութիւնը առանց շեղումի պէտք է գործադրէ Մելգոնեան եղբայրներու կողմէ իրեն աւանդուած կտակին տրամագրութիւնները: Ան ապա աւելցոյց որ իրաւատէրը ով ալ ըլլայ Հաստատութիւնը պէտք է, մնայ հոն, ուր որ ան խարխաւեր է: Իսկ եթէ նիւթականը խնդրոյ առարկայ է, ան եզրակացուց, կիպրոսի կառավարութիւնը խոստացեր է տարեկան 300,000 տոլար յատկացնել անոր, իր այլազան ծախսերուն Համար:

Փօլ Եալնզեան խօսք առնելով պատմեց Հետաքրքրական դրուագներ Աեպուհ Արգարեանի ուսուցչական կեանքին: Իսկ յայտնի դերասան Լիոն Ֆէրմանեան հանդէս եկաւ իրեն յատուկ զուարճախօսութեամբ մեծապէս խանդավառելով թոյր Հրաւիրեալները: Գեղարուեստական յայտագրին մաս կազմեց նաեւ իտա Ադախանեանը մեներգելով երկու երգ, որոնցմէ մին իր իսկ ստեղծագործութիւնն էր: